# ԾԱՂԻԿ

ՀԱՆԴԷՍ

40 ՓԱՐԱ ԱԶԳԱՅԻՆ ու ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՓԱՐԱ 40

ԾԱՂԻԿ շաբաթը երկու անգամ կը հրատարակուի Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերն: — Տարեկան բաժանորդագրութեան գինն է 100 ղրշ. արծաթ. —Վեցամսեայն 50. — Գաւառաց համար 115 ղրշ. Վեցամսեայ 60. — Ծանուցման տողը 5 ղրշ.

Որ եւ է նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել
Առ Արտօնատէր եւ Տնօրէն Անտօն Սաքաեան,
Ալաճա Համամ, Քիւչիւկ Եըլտըզ խան Երկրորդ յարկ Թիւ 9:
Խմբագրութեան յանձնուած գրութիւնք ետ չեն տրուիր:

ԹԻՒ 184 Գ. ՏԱՐԻ — 1888 — ԴԵԿՏԵՄԲԵՐ 24 ՇԱԲԱԹ


### ԻԽԹԱՐ

—

Եըլ պաշը օլմագ միւնասիպէթիյլէ, հէնուզ հիսապլարընը թէսվիյէ իթմիշ օլմաեան Իզզէթլու ապօնէլէրիմիզ պիր աղ խարճլըղ կէօնտէրէրէք պիզի, պուլունտուղումուզ հալը մուզայիգատան գուրթարմալարընը խասսէթէն րջա վէ իխթար իյլէրիզ:

---

## ԾԱՂԻԿԻ

### ՆՈՐ ՏԱՐԵՇՐՋԱՆԸ

—

Դեկտեմբերի քսանըորդ օրը կարեւոր թուական մ'է ԾԱՂԻԿի գոյութեան եւ իր Պատուարժան ընթերցողաց համար: Զի, այդ օրուան մէջ, ԾԱՂԻԿ, իր բուրումնաւէտ թերթերը պարզեց, լրագրութեան ճշշեր բուրաստանին մէջ. Փչալից ըսինք, վասն զի, ամէն ուղիղ գործ, փուշեր ունի իր ոտից տակ, եւ այն, որ իրեն ըսկզբունք եւ նշանաբան կ'ընտրէ, իր ազգասիրական պարտականութիւնն խղճի մտօք եւ անթերի կատարել, անշուշտ իր ճամբուն վրայ բազմաթիւ խոչընդոտներու եւ դժուարութեանց կը պատահի, եւ փշեայ պըսակներ կ'ընդունի իբր բաժին, փոխան ծաղկանիւս դափնիներու. Սակայն չի շեղինք մեր նպատակէն, անցնի'նք եւ ըսենք ինչ որ առաջադրեցինք ըսել:

Այդ օրուան մէջ, ԾԱՂԻԿ, սկսաւ ծիլ արձակել, տակաւ փթթիլ եւ իր բոյրն ծաւալել ժողովրդեան ամէն խաւերու եւ ամէն խորշերու մէջ, եւ ահա, այսօր, շնորհիւ այն փայլուն յաջողութեան, որով պսակեցան իր անդուլ աշխատութիւնք, եւ շնորհիւ մեր Ցարգամեծար ընթերցողաց քաջալերութեան, զոր իրաւամբ կ'ակընկալէր. իր երրորդ տարեշրջանը կը թեւակոխէ 1888 դեկտեմբերի քսանըորդ օրը. Ուրեմն, արդար չէ՞ ըսել թէ այդ օր կարեւոր թուական մ'է ԾԱՂԻԿի գոյութեան համար:

Բայց ԾԱՂԻԿ, ի՞նչ ըրաւ, նախորդ երկու տարիներու ընթացքին մէջ, տարիներ, զորս իւր ետեւ կը թողու իբր անցեալոյն փառաց զոյգ մը կոթողներ. այո', ի՞նչ կրցաւ ընել այն, եւ ի՞նչ արդիւնք արտադրեց, որով կարենայ պարծիլ ապագայ դարերուն առջեւ: Թողնամիք ոմանք, հակառակ խղճին արդար բողոքներուն, կ'ուզեն ապարդիւն ցոյց տալ ԾԱՂԻԿի երկամեայ տարեշրջաններն, յագուրդ տալու համար իրենց անձնական կրից ու ատելութեանց, բայց ճշմարտախօս բերաններ, արդար դատաւոր կը հանդիսանան, եւ չեն դադրիր ճշմարտութիւնըն յայտնելէ, ափ ի բերան խայտառակելով, այն ամէն չարամիտներն, որոց եւեթ նպատակն է, ստուեր տարածել, ԾԱՂԻԿի, առ իւր սիրեցեալ Ազգն մատուցած այնքան ծառայութեանց վրայ:

Ինչ. մինթէ արդարութիւնք կրնայ ծածկուիլ, երբ շատեր, բարձրաբարբառ կ'աղաղակեն: «Ծաղիկ [illegible]»:

Ի՞նչ ըրաւ ԾԱՂԻԿ, հանրային կարծեաց թարգման հանդիսացաւ, ազգային իրաւանց պաշտպան կանգնեցաւ, ազգավնաս արարքները նշանակեց, մեքենայութիւնները նշաւակեց, եւ իր զուարճախառն բարոյականաւ ամէն խաւերու եւ դասակարգի մէջ մտաւ, բարոյալից դասեր տուաւ, եւ ջանաց, ի մի բան, իւրովսանն ծառայել իր սիրեցեալ ազգին, ինչ որ իւր նպատակը, իւր սկզբունքն, իւր գաղափարականն էր:

Բայց ԾԱՂԻԿ, այս չափով գոհ չեղաւ. ուզեց իր կարողութենէն վեր գործերու մէջ մտնել: Ուստի, իւր քով կանչեց Աշխոյժն, խորհուրդ տուաւ նըմա մտնել ամէն ծակ ու ծուկ, եւ հանրային վիճակէն պարբերաբար տեղե-

կութիւններ բերել, որպէս զի Ծաղիկ ալ, զանոնք իւր թղթէ թեւերուն վրայ առած, տանի ներկայացընէ իւր Պատ. ընթերցողաց ։ Ասմոդէ, քիչ մը մտածելով, յուսկ ուրեմն յանձըն առաւ մեր առաջարկ, և ուխտեց, յանուն ամենայն դիւաց, սատանայից և սանդարամետաց, անթերի կատարել իրեն պարտականութիւնը ։

Հետեւաբար ԾԱՂԻԿ Ասմոդէի միջոցաւ իրաց վիճակին ծանօթանալով, հանրութեան վարքն ու ընթացքը ջանաց իւր թերթերուն վրայ մարմնաւորել, իրենց ճշգրիտ նկարագրով, որպէս զի, այս կերպիւ, կարենայ օգտակար ըլլալ իւր ազգին և ուղղել ամեն ինչ որ ծուռ կ՚ընթանայ և արգելաբեր է ազգային յառաջդիմութեան ։

Պարզ ըսելով, ԾԱՂԻԿ, Նինէ խանըմներուն հարկ եղած ձեւով խօսելով, ճանչցուց անոնց, իրենց դրած ֆօթօզներուն յարգն ու պատիւը, ցուցուց իրենց տկար կողմերն, որպէս զի վերջ տան այլ եւս բամբասանաց և չաղակրատութեանց ։

Օրիորդներուն և տիկիններուն մէջ մտաւ, տեսաւ անոնց լկտի ձեւերն ու բարքերը, մատնանիշ ըրաւ զանոնք, քաշեց անոնց ականջէն, որպէս զի զգաստութեան բերէ զանոնք ։ Չը մոռցաւ անառակ որդիներն ալ, որոնք կը սիրաբանէին և անկարգ վարմանց մէջ կ՚աղարտէին իրենց կացութիւնն ու դիրքը, բռնեց անոնց օձիքէն, առջեւը ձգեց, և տարաւ մինչեւ ծունր դնել տուաւ Մովսէսի գաւազանին առջեւ ։

Վերջապէս, միով բանիւ, չի փոխեց իւր սկզբունքն, և մարդկութեան ու խղճի դէմ գործողները նշաւակեց, և պիտի նշաւակէ յաւիտեան ։

Ուստի մեր այս Նոր տարեշրջանին առթիւ, քաղցր պարտականութիւն կը համարինք, մեր ջերմ շնորհակալութիւնն և երախտագէտ զգացումներն յայտնել առ Պատ. բաժանորդս և ընթերցողս ԾԱՂԻԿի, որք իրենց նիւթական և բարոյական ամեն տեսակ քաջալերութեամբք խրախուսեցին մեզ, հարթելով մեր առջեւ ամեն խոչեր և խութեր, և ի փոխարէն սոյն քաջալերանաց, կը խոստանանք նոր եռանդեամբ և նոր ջանքերով շարունակել մեր աշխատութիւններն, առաւել եւս գոհ ընելու համար մեր ընթերցողներն ։

## ԱԶԳԱՅԻՆ

Քաղ. Ժողովս չորեքշաբթի օր ի նիստ գումարեցաւ ի Խորհրդարան Ղալաթիոյ և ի միջի այլոց զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով ։

1. Ժողովը Գումգաբուի դրսի առժամեայ Թաղ. Խորհրդոյ պակաս անդամոց թիւն նոր ընտրութեամբ լըրացուց ըստ առաջարկութեան տեղւոյն Արժ. Քարոզչին ։

2. Ժողովս ուշադրութեան առնլով ազգային կալուածոց ապահովութեան խնդիրն, որոշեց միւսանգամ թագրիր մատուցանել կայս. կառավարութեան՝ սոյն խնդրոյն կարգադրութեան համար ։

3. Գանտիլլի Թաղ. Խորհուրդը տեղւոյն եկեղեցւոյ շէնքին վերանորոգութեան պէտքն յայտագրած և հարկ եղած գումարն հայթայթելու համար հանգանակութեան ձեռնարկելու արտօնութիւն խնդրած էր։ Որոշուեցաւ յանձնել խնդիրը Տնտես. Խորհրդոյ ի քննութիւն ։

4. Եգիպտաբնակ ազգայիններէն հանգուցեալ Աչըգեան Յակոբ էֆէնտի իւր Աղեքսանդրիոյ մէջ ունեցած ստացուածքէն եօթն կտոր կալուածոց հասութից մէկ մասը դատարանէն վաւերացեալ Վագֆիյէով մը ազգին կտակած, և գործադրութեան դէմ արգելքներ յարուցած էին ։ Ժողովը նկատելով որ խնդիրն յատուկ խնամոց և մասնաւոր հետապնդութեան կը կարօտի, մասնաժողով մը կազմեց ընդ նախագահութեամբ Երուսաղեմի Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Սիմէոն Արքեպիսկոպոսի և անոր յանձնեց հետամուտ լինել ապահովելու կտակին գործադրութիւնն և խնդիրը կարգադրելու ։

---

# ԿՈՆԴԱԿ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

### Տ. Տ. ԽՈՐԷՆ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

### ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՈՑ Կ. ՊՈԼՍՈՅ

(Շար եւ վերջ)

Եթէ եղծանելի և մահկանացու մարմինը այնչափ կը հագուեցնէք և այնչափ կը պարարտացնէք, ինչո՞ւ հոգին, որ անեղծական է, Աստուծոյ նմանութիւնն, Աստուծոյ պատկերն է, մերկ և առանց դարմանի երեսի վրայ կը ձգէք ։ —Ո՞չ ապաքէն, ինչպէս Տէրն մեր կ՚ըսէ, հոգին մարմնէ աւելի է։ Զաւակ ծնանել և միայն ըստ մարմնոյ դարմանել անբան կենդանիներն ալ կ՚ընեն ։ իսկ մենք՝ որ բանական եմք և Աստուծոյ կը նմանիմք աւելի լաւ էր որ բնաւ զաւակ չծնանէինք, քան ծնանէինք և նոցա հոգիներն անխնամ երեսի վրայ ձգէինք ։ Լաւ է ըսած է իմաստուն մը՝ հանդերձեալ դատապարտութեան օրն մինակ միայ և վա՜յ ինծի աղաղակել քան գունդ մը անկիրթ վայրենի և դատապարտելի զաւակներով միաբերան վա՜յ մեզի աղաղակել և ողբալ յուսահատութեամբ ։ Այլ և կը պատուիրեմ ծնողաց՝ որ ոչ միայն իրենց զաւակաց դաստիարակութեան հոգ տանին այլ և զգուշանան օտար դըպրոցաց կրթութենէն, զի դաստիարակութիւնն և ուսումն դաստիարակին բարքն ու բնութիւնն անպատճառ աշակերտին հոգին կը մխեն, դաստիարակին ոգեկան մի թեթեւ յուզմունքը, բերնէն թռած փոքր մի բառը, զգացական ամենադոյզն մի երեւոյթը գաղտնի և անգիտակից հոսմամբ կը խաղայ կերթայ կը փոխադրուի տղային սիրտը ։ ուստի հոգեբանական ուղղութեան հակառակ է ոմանց ըսելը՝ թէ ուսմունքն այլ է կրօնքն այլ ։ և թէ —ոչ թէ կրօնքի՝ այլ արտաքին ուսմանց համար կը ղրկեմք մեր զաւակները օտարաց վարժարան ։—Կրօնք և գիտութիւն իրարմէ բաժանմամբ մշակել մարդուն մէջ գործնական հակառակութիւն է, ուղիղ միտքը չկրնար ըմբռնել այդ հակասութիւնը ։

Եւ Ձեզ գրագիտացդ՝ և որք ազգին մէջ հրապարակի վրայ կը գրէք,

կը պատուիրեմ, ով որ բաւական իմաստութիւն և գործնական փորձառութիւն չունի չնետուի ի հրապարակ, չգրէ և չտարածէ այնպիսի իմացումն և գաղափարներ՝ որ հակասական են, դժպատեհ են, որ ազգային աւանդութեանց պահպանման չեն առաջնորդեր, յառաջդիմական սկզբունք մը չեն զարգացներ, բարեպաշտութիւն չեն մշակեր, ազգային օրինաւոր իշխանութեան հնազանդիլ չեն յօժարեցներ: Չեմ կամիր, որ՝ ինչպէս լրագիրք ոմանք սովորութիւն ունին, բերան լինին զրպարտչաց, և կիրքերն այլանդակօրէն յուզելով դէմ առ դէմ կռուի հանեն պակասամիտներն, և հրապարակը լեցունեն և ողողեն անլուր գայթակղութեամբք: Չեմ կամիր՝ որ եկեղեցական կարգաւորութեանց և եկեղեցւոյ պաշտօնէից վրայ անդուռն բերանով խօսին. չեմ ուզեր որ հոգևոր պաշտօնէից հեզութիւնը հալածեն՝ նոցա անյիշաչարութեան պարտքէն երես առնելով:

Եւ Ձեզ մանկունք՝ որ գիտնարար դպրոցաց ընթացքն աւարտելով կը մտնէք յաշխարհ, գործնական յառաջդիմութեան մեծ դպրոցն, խրատ կուտամ. մի՛ յոխորտաք, մի՛ ինքնահաւան լինիք, սկեպտական դժգոհութեամբ և 'վարանոտ փիլիսոփայութեամբ մը արուեստները մի՛ խոտէք, և ձեր ամէն բանէ դժգոհ ճաշակին հետեւելով երկայն ատեն անգործ մի՛ թափառիք. դպրոցէ ելնելնուդ պէս ինչ գործ կամ արուեստ որ առաջին անգամ դիմացնիդ կ'ելլէ՝ անմիջապէս յարեցէ՛ք. արուեստ մը՝ որ տգէտին ձեռքը անշահ և անաճեցուն մնացեր է, դուք ձեր մշակեալ խելքովը կրնաք դժուարը դիւրացնել և անշահը շահաւոր ընել: Գիտնալու էք մանկունք, որ առեւտրական աշխարհի կըռիւը բանիւ և միայն գրչի փափկութեամբ չմղուիր: Աշխարհի մէջ ընդհանուր և չտապալի մրցմունքը, առանց մեր գիտնալուն, շատ անգամ այնպիսի չփոթութիւն կը բերէ գործոց վրայ, որ վերջինները առաջ կ'անցնին, առաջինները ետ կը մնան, իսկ եթէ կայ բան մը՝ որ մարդուս հարկաւոր եղած վիճակը անխախտելի կը պահէ, այն ալ աշխատութիւնն և յարատեւութիւնն է հանդերձ անսասանելի հաւատարմութեամբ:

Եւ ձեզ մեծատունք և որք Աստուծոյ յաջողելովն աշխարհի մէջ բարի վիճակ ունեցեր էք, կը պատուիրեմ, որ ձեր մեծութիւնն ու բաղդաւորութիւնը պարգեւ Աստուծոյ համարիք, և ոչ թէ միայն ձեր անձնական ճարտարմտութեան և աշխատութեան պտուղ: Ամենայն բարութեանց աղբիւրն և պարգեւողն Աստուած է. ո՛ր մեծատուն որ իւր մեծութեան և հարստութեան մէջ Աստուած և աստուածային բաները կը մոռնայ, աղքատները, մերկերն և հիւանդները կը մոռնայ, անիկայ Աստուծոյ պարգեւաց անարժան է, ինք՝ կամ իւր սերունդը շուտով կիյնայ մեծութենէ, յաւիտենական կեանքէ ալ կը զրկուի: Որովհետեւ Աստուած երբ կը տեսնէ որ անիրաւ մամոնայն գործածելու մէջ հաւատարիմ չեղաւ, ճշմարիտ մամոնայն, այն է երկնից արքայութիւնը, անոր չվստահիր՝ չտար: Մեծատունք, յիշեցէ՛ք թէ Աստուած ինչ սպառնալիքներ ունի անողորմներուն վրայ. մի՛ աշխարհի այս կորստական բարիքներուն վրայ այնչափ սրտերնիդ կապէք, զի այս տեսակ չափազանց նիւթապաշտութիւնը ձեր մտքէն կը հանէ յարութեան հաւատքը, յաւիտենական կենաց յոյսը, և Աստուծոյ քով արդարոց հետ յաւիտեանս թագաւորելու փափաքը:

Դուք ալ աղքատներ, որ Քրիստոսի տեառն մերոյ կերպարանքն ունիք, ծուլութիւն, շռայլութիւն, և անհեռատեսութիւն ընելով մի ինկած մընաք ձեր թշուառ վիճակին մէջ, կաղաչեմ ով որ ձեռք ոտք ունի, աշխատի և պարէնն հայթայթէ, ճըշմարիտ աղքատաց բաժնին բեռ չըլլայ: Յիշեցէ՛ք սուրբ առաքելոյն խօսքը որ կըսէ —Անգործ մարդը հաց չուտէ. տեսէ՛ք, ձեռքը անգործ և բերանը բաց մարդիկը որչափ կատէ առաքեալը և ինչպէս խստութեամբ կը դատապարտէ: Շատեր կան գաւառացիներէ՝ որ իրենց բնիկ աշխարհի մէջ աշխատելու և հաց ճարելու տեղ տուն և զաւակ կը թողուն կը լեցուին օտար քաղաքներ, և այնչափ երկար ատեն կը մնան պանդխտութեան մէջ՝ մինչեւ ամէն բան կը մոռնան: Գործունեայ, աշխատասէր, մանաւանդ թէ ընտանիք սիրող մարդն այսպէս չըներ, իւր բնակած երկրին մէջ ինչ որ կարելի է ընել կընէ, եթէ հարկ ըլլայ հեռանալ՝ չմոռնար տունը, և չ'դանդաղիր և մնար օտարութեան մէջ:

Ի վեր քան զամենայն, եղբարք, առ հասարակ ամենուդ ալ կը պատուիրեմ՝ որ աշխատիք զաւակաց դաստիարակութեան, որովհետեւ բոլոր անկարգութեանց և չարեաց արմատը տգիտութիւնը և անկրթութիւնն է. տգիտութիւնը կը կուրացնէ, չենք տեսներ թէ խիստ մօտ և գրեթէ ձեռքերնիս ինչ նախախնամական բարիք պատրաստ կայ: անկրթութիւնն ալ սրտերնիս կ'ապականէ. չենք կըրնար հասկնալ՝ թէ Աստուած սիրելէն, Ազգն ու ընկերը սիրելէն ի՛նչ բարիք կրնայ յառաջ գալ:

Կ'աղաչեմ բոլորդ ալ սիրով Յիսուսի Քրիստոսի. սիրեցէ՛ք զիրար, միաբանեցէք ի շինութիւն եկեղեցւոյ և ի յառաջադիմութիւն վարժարանաց:

Աղօթեցէ՛ք մեր ամենաբարեբար Թագաւորին Սուլթան Ապտ-Իւլ-Համիտ Խան կայսեր համար, որուն արդարութիւնն և հպատակաց վրայ ունեցած սէրը արեւի պէս անխտիր կը տարածուի բոլոր հպատակաց վրայ, որպէս զի բոլոր ազգեր որ նորա արդարութեան աթոռոյ ներքեւ հովանացեալ են՝ կարող լինին պահել և պահպանել ի խաղաղութեան և յերջանկութեան:

Օրհնեսցէ Տէր Աստուած մեր Թագաւորին աթոռն և իշխանութիւնը որ տեւէ յաւիտեան, օրհնեսցէ և Նախարարեանը՝ որ Թագաւորական արդար հրամանները կարող ըլլան հաւատարմութեամբ կատարել:

Օրհնեսցէ Տէր Աստուած Հայաստանեայցս առաքելական սուրբ եկեղեցւոյ Հայրապետութեան հոգեւոր աթոռը, բոլոր եկեղեցիքը, վանորայքը, դպրանոցներն և այլ ամէն կերպ ազգային հաստատութիւններն:

Օրհնեսցէ Տէր Աստուած մեր բոլոր Թեմերն և առաջնորդարաններն, երեսփոխանական ժողովներն, վարչական խորհուրդներն, հոգաբարձու-

թիւններն, և բոլոր բարենպատակ ընկերութիւններ՝ որ կան մայրաքաղաքս և գաւառներն ։

Շնորհք և խաղաղութիւն Աստուծոյ եղիցի ի հոգիս ամենայն հաւատացելոց ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն ։

# ԿԵՐՈՒԽՈՒՄ ՄԸ ԽԱՒԱՐԻՆ ՄԷՋ

—

(Նօխօրզ Բէօէն)

Վենետիկէն սկսեալ, Սդօգդօնի գետը կը սկսի յանկարծ լայննալ և տակաւ ծովու նեղուց մը կը դառնայ Սան-Ֆրանչիսգօ խորշը թափելէ մէկ քանի ժամ առաջ ։

Ամերիկայի մէջ այն շոգենաւներն, որք գետերու վրայ կը նաւարկեն, այնքան շատ գետնածուխ չեն սպառեր ։ Անոնք կը ջեռնուն այն անտառաց փայտերով, որոց շեղջակոյտք ուրեք ուրեք կը գտնուին գետափանց վրայ ։ Հետեւաբար, նաւերու տախտակամածը չի խափանելու մօք, ճիշդ այնքան վառելանիւթ կ'առնուն, որքան բաւական է ուղեւորութիւնը լրացունելու համար ։

Եթէ պատահաբար փայտը պակսի, յայնժամ նաւը կանգ կ'առնու, փայտ կտրելու համար, վասն զի անտառները բազմաթիւ են գետափանց վրայ, և ռետինաբեր ծառեր կը վխտան անտառներու մէջ ։

Սագրամէնդօ թողած էր գիշերուան դրեթէ քառորդ ժամէ մը ի վեր, երբոր նորա ուղեւորք նշմարեցին, թէ Բօսթէն, որ իւր խարսխարկութեան միջոցին տասը կամ տասներկու բաղէ կորուսած էր, կը ջանար շահիլ իւր հեռաւորութիւնը ։ Բայց քիչ յետոյ, դրեթէ չորս հարիւր մեդր հեռի կը գտնուէր սա իւր մրցակիցէն, և դիւրին էր իմանալ թէ նորա նպատակն ուրիշ բան չէր, եթէ ոչ Սագրամէնդօէն առաջ անցնիլ ։

Խաղամոլ մը, որ ամբողջովին կորուսած էր իւր ունեցած ստակները, գիշերային զուլութենէն զէթ սփոփանք մը խնդրած միջոցին, առաջին անգամ գուշակեց մրցակից շոգենաւուն դիտաւորութիւնները ։ Անմիջապէս վազեց այն սենեակը, ուր իւր հակառակորդը 60,000 դահեկանի վէճ մը յարուցած էր, և այս մեծ լուրը հաղորդեց ։

Այսոր վրայ, այնպիսի զարհուրելի խառնակութիւն մը, այնպիսի շփոթ մը յառաջ եկաւ, զոր կարելի չէ նկարագրել։ Ոսկեխնդիրներու նման, բոլոր խաղամոլք նաւուն տախտակամածին վրայ գահավիժեցին, թողլով իրենց խաղն ու թուղթերը ։

Արդարեւ, ի՞նչ շահ կրնար ունենալ այժմ թղթախաղն ։ Նոքա խաղալու կ'երթային խաղ մը, որ այլապէս սոսկալի, և ահաւոր էր քան զայն, որ թղթերը դարձունելու մէջ եւեթ կը կայանայ ։

Նաւ մը և երեք հարիւր հոգիներու կեանքն էր, այս անգամ խաղու դրուած ստակն, առանց հաշուելու նաեւ այն մասնաւոր գրաւները, զորս անվրէպ կը դնէին երկու շոգենաւերէն միանգամայն ։ Գետին յատակը յաղթեալին, թերեւս յաղթողին իսկ բաժինն էր ։ Պէտք է խոստովանիլ նաեւ, թէ Բօսթէն յաջող էր և իւր փորձութեան պիտի ենթարկէր այն անձերն, որոց դիտաւորութիւնն աստիճան աստիճան էր, բայց որք արբեալ էին բացարձակապէս ։

Երկու երեք խաղամոլք, շաքարօղիի շիշերով սպառազէն, մեքենավարին քով վազեցին և խմցուցին նմա, հաւատալով միանգամայն թէ անկարելի, իսպառ անկարելի էր որ Սագրամէնդօէն կարենար յառաջ անցնիլ միւս շոգենաւը, Բօսթէն ։

Այս յայտարարութեան վրայ, մեքենավարն, որ Մադիսըն կը կոչուէր, սկսաւ քամել շաքարօղիի բաժակ մը, գաւաթ մ'ալ հնոցապանին ներկայեց, ապա, ուրիշ մը եւս ինք պարպեց և միացեալն իւր ընկերոջ թողլով, ըսաւ,

—Շատ լաւ . . .

Եւ այն ատեն ուղեւորաց ամբոխը կը քաջալերէին, կը սրտապնդէին զայն, առատ դրամ կը խոստանային նմա և բարկութեամբ ու անհամբերութեամբ ոտքերնին գետին կը զարնէին ։ Բայց, Մադիսըն, առանց վայրկեան մը կորսնցունելու զիւր տոհմական պաղարիւնութիւն, փայտ առաւ, ամենէն ռետնաւորն ու ամենէն չորցածն ընտրեց. և դրաւ վառարանին մէջ այնքան, որքան կրնար պարունակել այն. ապա բոլոր շոգին դուրս արձակեց, անգայտաչափին վրայ ծածկեց. որպէս զի ոչ ոք կարենայ հաշուել մթնոլորտին զօրութիւնը և, յանուն ամենայն դիւաց և սատանայից, երդում ըրաւ, որ Սագրամէնդօ զառաջինն պիտի ժամանէր Սան-Ֆրանչիսգօի խորշը, առաւօտեան ժամ չորսին ատենները ։

Այս երդումը բաւական հանդարտեցունել թուեցաւ այս խենթ դիւահարներն, որք արդէն սկսած էին լուտանքներ տեղալ մեքենավարին երեսին, ամենուն ակնարկը բեւեռեալ էր Բօսթէնի վրայ, ուր նաւապետը պատուոյ խօսք կուտար, բոլոր սատանայներն վկայ կոչելով, թէ իւր նաւը ժամ չորսին քառորդ մնալով քարափին պիտի կառանէր ։ Եւ երկու նաւերէն սկսան զիրար թշնամանել ։

Այս վայրկենիս, Բօսթէնի ցռկակայմն, որ իւր տասնեւհինգ կանգունը կը թուեցունէր, Սագրամէնդօի հետ մի և նոյն գծի վրայ կ'ընթանար ։ Շոգւոյն ճնշման ներքեւ, այս վերջինը կուգար առնուլ նոր թափ մը, որ անհնարին արագութիւն մ'ունէր ։

Եւ ոչ մէկ ուղեւոր կը մնար իւր սենեկաց մէջ ։ Նաւուն տախտակամածին վրայ ուրիշ պառկող չկար, բայց միայն անոնք, որք կարի իմն արբեալ էին. վասն զի եթէ ուղեւորք թողած էին թուղթերն ու շիշերը, այս վերջինք չէին մնացած համբարանոցին մէջ ։

—Հուռա՜յ, հուռա՜յ, ռռնացին երեք հարիւր ձայներ իւրաքանչիւր շոգենաւու վրայէն ։

Մրցումն սկսաւ վերջնապէս բորբոքիլ ։

—Այս մարդիկ խենթ են, մրմռաց Ժօռժ Լառռէյ, հանդարտութեամբ ։

Աւելորդ կը համարիմ ըսել, թէ Ֆրանսուա Բօյէռ վախէն կանաչ գոյն մ'առած էր ։ Իւր մազերը կը քստմնէին, ակռաները կը կափկափէին իրարու դէմ ։ Ձեռքին արտաքին կողմով կը սրբէր իւր քրտնաթաթաւ ճակատը ։ Բովանդակ մարմինը կը դողար և կը կորանար ոսկւոյն ծանրութեան տակ, զոր կը պահէր իւր գօտւոյն մէջ ։ Սոսկալի և միանգամայն ծիծաղաշարժ կերպարան մ'առած էր ։

—Խե՜նթ թշուառականներ, մըրմընջեց հեւալով և կակազելով, ապահով եմ թէ յօդս պիտի վերանանք։ Լառւէյ, բարեկամս, մի վախնար բնաւ. պայթման առաջին նշանին, գլխիվայր ջուրը կը նետուինք։ Երկուքս ալ լողալ գիտենք, ի՞նչ կը նըշանակէ քառասուն և ութ ժամ շարունակ հանգարտ չի մնալ։ Սակայն մեր ոսկին եւս ի ծով նետել պէտք պիտի ըլլայ։ Ա՜հ, եթէ սա հնգապետին գլուխը ատրճանակի գնտակով մը կարենայի պայթեցունել . . .

(Շարունակելի) Թարգմանեց

ԳԷՈՐԳ Կ. ՍԻՄՔԷՇԵԱՆ

## ՆԵՎԻՅԵԷ

### ՊՈՒԶՏԱՆ ԱԹԷՇ ՀԱՍԸԼ ԻԹՄԷՔ

Լը Մօնէգէօ տը լա Փօթօկրաֆ նամ ղազէթանըն Լոնտրա մուխպիրի, մէզքիւր ղազէթայա ածիտէքի ֆըգրայը եազըյօր տըր։

Հէնուզ կէլմիշ օլան գըշ օլթասընտա՝ թալէպէնին պիրի՝ պիր պուզ փէրթէվասը եափըփ, անըն իչինտէն կիւնէշ փէրթէվլէրի կէչիրմէքլէ, եըլան թօզը եագերինտէ, գըզգըգ գայատըրանլարըն պօրուլարընը թութուշտուրտու։ Պու թէճրիւպէ՝ կէմիճիլէրին թէաճճիւպի ազիմինի մուճիպ օլմագ իւզրէ՝ գուլթըպի պէլտէտէ Տր. Սքօրզպի թարաֆընտան իճրա օլունմուշ տուր։ Կէմիճիլէր, պուզուն կիւնէշին փէրթէվլէրինի տօնտուրմադըղընը սէյլէյ ու հիքմէթինի պիր թիւրլիւ անլայամաօրլար իտի։ Պուրաճըգտա պէյան իթմէք միւնասիպ տըր քի, Փրօֆէսէօռ Թինտալ՝ տար իւլ ֆինտընտան՝ պուզէն պիր պուզ փէրթէվասը վասըթասըյլա էլէքթրիգ քէմէրինտէն չըգան զիյա փէրթէվլէրինի, պարութըն իւզէրինէ տիւշիւրմէքլէ, քիւչիւք պիր պարութ քիւմէսինի թութուշտուրմուշ տըր։

Փրօֆէսէօռին պու խուսուսու իսպաթ իթմէք պապընտաքի պէյանը շու իտի քի, հէր նէ գատար պուզ՝ պազը փէրթէվլէրի քէնտինէ չէքմէքլէ թէսախխուն էյլէր իսէ տէ, սաիրլէրինի չէքմէյիփ ինտէն, պու սօնրաքիլէր, փէրթէվասըզըն նօգթայի իհթիրագընտա եագըճը թէէսիրի հասըլ իտէրլէր. Ասըլ մէսէլէ՝ տօնմուշ սուեուն ճէվհէրլէրինին նիսպէթի հարարէթլէրի իլէ զիյա տալղալարընըն հարէքէթլէրինտէն իպարէթ տիր։ Էկէր մէզքիւր իքի հարարէթլեր արասընտա մուխալէֆէթ վար իսէ, մուխալիֆ տալղալար պուզտան էմիլմէքսիզին պուզուն իչինտէն կէչէրլէր։

—

### ԳԱՀՎԷՆԻՆ ՖԱՅԻՏԷԼԷՐԻ

Գահվէ, գուվվէթլի վէ մուհրիք օլտուղունտան, պիր ֆինճանը՝ հազմի թէսհիլ իտէր։

Ցէօլիւմիւշ վէ պիր սիլիմ լիմօն իլէ սըճագ սուտա գարըշտըրըլարագ միգտարը քէաֆի չէքէր գաթըլմըշ գահվէնին իչիլմէսի բէք ալէա օլտուղտան պաշգա, սըթմաեա գարշը զահէթ թէէսիրլի պիր իլաճ տըր։

Աֆիօն վէ պունա միւմասիլ ուեուշտուրուճու մատտէլէրին թէէսիրինտէն հասըլ օլան ույգու գահվէ իլէ տէֆ օլուր։ Շէքէր իլլէթի իլէ թէպէվվիւլի գեյալ իլլէթինտէ բէք զիեատէ թէէսիր կէօսթէրիր։ Գօլէրաեա գարշը բէք չօգ ֆայտէլէրի օլտուղու կիպի, պօղմաճա էօքսիւրիւկինտէ տախի գուլլանըլըր։

Իմտի, աֆիօնու զիեատէճէ իսթիմալ իտէնլէրէ, աֆիօնուն թէէսիրաթը մուզիրրէսինի իզալէ իչին, թէրթիպի աթի թավսիյէ օլունուր։

100 կրամ էյի պէեազ շիքէր,
20 » գավրուլմուշ գահվէ,
20 » չէքէր,

Պունլարտան էվվէլա շիքէրի պիր ճէզվէ տէրունինտէ գայնատըփ, գահվէ վէ չէքէրի իչինէ վազ իտէրէք, ալէլ ուսուլ բիշիրիլէն գահվէ կիպի բիշիրմէլի, վէ աֆիօնուն թէէսիրաթը մուզիրրէսինէ տուչար օլան շախսա իչպու թէրթիպ, սըճագ օլմագ շարթըյլա հէր սաաթտա պիրէր չօրպա գաշըղը վիրիլմէլի։

Կէրէք սապահլարըն վէ կէրէք թաամատան սօնրա թավսիէ պիր ֆինճան գահվէ բիշիրիլմէսինի հէր քէս արզու իտէր։ Իշթէ սահրալը թապիէթէ պու սղաթէ թէսաատիֆի աթիտէ իւզրէ բիշիրիլէճէք գահվէնին լէզզէթի ֆէվգէլատէ օլաճաղընը թէպշիր իտէրիզ։

Հիչ գուլլանըլմամըշ պիր ուֆագ թավա ալընըզ, գահվէյի իչինէ գէմանտան 5 տագիգա էվվէլ պու թավա իչինտէ վէ աղըր աթէշտէ չալքաթ աշըգ վէ գըրմըզըճա պիր րէնկ քեսպ իտինճէյէ գատար գավուրունուզ, պատէհու տէնիրմէնտէ չէքէճէք էթտէ հէնուզ սըճագ իքէն պիր մէրմէր հավանտա տէօկիւնիւզ։ Իշպու գահվէտէն քէաֆի միգտար գայնամըշ պիր ճէզվէ սուեուն իչինէ վազ իլէ, ալէլ ուսուլ բիշիրինիզ վէ սօղումաղա պըրաղըն իչինիզ։

Իշթէ պու եօլտա բիշիրիլէն գահվէնին իչիմի խօշ վէ գուվվէթլի թահրիքիեէսի միւքէմմէլ օլաճաղընտան, գահվէ իչիմինտէն մունթազըր օլան ֆայտէլէր թէմամիյլէ հասըլ օլուր։

(Սըհհաթ)

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

—

ՀԱՄԱՌՕՏ
## ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
### ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ
ԽԻՍՏ ԴԻՒՐՈՒՍՈՅՑ ԵՂԱՆԱԿ

—

(Նախորդ Թիւէն)

Ածականները գոյականէն թէ եւ թէ առաջ կրնան դրուիլ. ածականներ կան որ բառին մէջտեղն ալ կրնան դրուիլ. ինչպէս. անխտիր կրնայ ըսուիլ. Պարոն Յակոբ, Յակոբ Պարոն, օրիորդ Շողակաթ, Շողակաթ օրիորդ։ Բառին մէջտեղը դրուած ածականի օրինակ տպագրական տառասխալներն են, որոց մասնիքը գրաշարները միայն գիտեն թէ ո՛ւր է։

*Հրահանգ նախորդ դասուց վրայ*

Ո՞վ կամ ի՞նչ բան հարցումով կը գտնուի կամ կը ճանչցուի ուղղական հոլովը, որո՞ւն կամ ի՞նչ բանին հարցումով՝ սեռականը, որո՞ւ կամ ի՞նչ բանի հարցումով՝ տրականը, զո՞վ կամ ի՞նչ բանը հարցումով՝ հայցականը, ո՞րմէ, ի՞նչ բանէ և ո՞ւրկէ հարցումով բացառականը, որո՞ւ կամ ի՞նչ բանի վրայօք հարցումով՝ պատմականը, ո՞րով կամ ի՞նչ բանով հարցումով գործիականը, և որո՞ւ կամ ի՞նչի մէջ վրայ՝ առենը հարցումով՝ ներգոյականը։ Կոչական հոլովը հարցում ունենալու մասին բացառութիւն է, ինչպէս իշխան մը՝ հասարակ մարդոց մէջ, վաճառական մը՝ խանութպաններու

մէջ և գրագէտ օրիորդ մը կամ տիկին մը՝ խոհարար օրիորդներու և տիկիններու մէջ ։

Յակոբը պոռաց և էշը զռաց ։ Ո՞վ պոռաց .—Յակոբը ։ ուղղական հոլով ։ Ի՞նչ բան կամ ո՞վ զռաց .—էշը ․ ուղղական հոլով ․ Պոռաց և զռաց բառերուն վրայ բայից մէջ պիտի խօսինք ։ (և)ը կապ կամ շաղկապ է , որ աղաւաղումն է կ՚ըսեն , «շաղգամ» բառին , և երկու խօսք կամ խօսքի նմանող երկու բան ինչպէս նաեւ երկու բառ իրարու կը կապէ , զորօրինակ . այր ու կին , մանչ և աղջիկ , Հայրս տիտիկ և մայրս մտիկ ըրաւ ։

Անոր եղբայրը՝ քրոջը տունը քակեց , որովհետեւ տխուրկէր էր ․ Ո՞վ քակեց .—եղբայրը ․ ուղղական ։ Ի՞նչ բանը քակեց—տունը . հայցական ։ Որո՞ւն տունը—քրոջը . սեռական ․ Որո՞ւն եղբայրը .—անոր ․ սեռական ։ Ինչո՞ւ քակեց ․—որովհետեւ տխուրկէր էր ․ աւելորդաբանութիւն ։

Աւելորդաբանութիւն կ՚ըսուին երկրորդական նախադասութիւններն , որ երբ զարդ կը ծառայեն գլխաւոր նախադասութեանց . ինչպէս թիւլն , ծաղիկն , փետուրն , փրփուրկն , և որ ի կարգին , գլխարկին փուռմային աւելորդաբանութիւններն են ։ Փիստանին աւելորդաբանութիւնը թուռնիւռն է կամ կեղծուիկն որ ի յետուստ կողմանէ բարձրացեալ և պայծառացեալ չարժի տատանի նազելապատի՛ւ ։

Հին իսրայէլացիք մանանայն կերան յանապատի , այսօրուան իսրայէլացիք լահանայն կուտեն ամենուրեք ։ Ո՞րոնք կերան ,—իսրայէլացիք ․ ո՞րոնք կ՚ուտեն .—իսրայէլացիք ․ այս «երկու իսրայէլացիք» բառերն ուղղական են ։—Ի՞նչպէս իսրայէլացիք .—հին և այսօրուան ․ ածական են ։ Ի՞նչ կերան և ի՞նչ կուտեն .—մանանայ և լահանայ . հայցական են ։ Ո՞ւր կերան և ո՞ւր կուտեն .—յանապատի և ամենուրեք ․ ներգոյական կամ տեղական անուն ։

Պօղոս մարգարէն և Դաւիթ առաքեալն գրագէտ և գրագիր էին ։ Ո՞վ գրագէտ և ո՞վ գրագիր.—Պօղոս և Դաւիթ. ուղղական ։ Պօղոս ի՞նչ, մարգարէ . Դաւիթ ի՞նչ—առաքեալ ․ աւելորդաբանութիւն ։

Այս տեսակ չարագրածոց շրջաբանութիւն անունը կուտան ճարտասանութեան մէջ ․ որովհետեւ կը տեսնէք անշուշտ թէ , խօսքի շրջան մը տեղի ունեցած է . մարգարէ և առաքեալ բառերն տեղերնին փոխած են ։ Ո՛չ շրջաբանութեամբ՝ պէտք էր ըսել . Պօղոս առաքեալը և Դաւիթ մարգարէն ։

Այսպէս երբոր բանջարավաճառն ուսուցիչ կ՚ըլլայ , մոտիսթրան՝ վարժուհի , նուագածուն՝ տնօրէն ։ մարսիլեացի նպարավաճառը՝ դաստիարակ, խոհարարը երեսփոխան, շրջաբանութիւն կը կատարուի , կամ , լա՛ւ եւս , շրջագործութիւն ։

Բայց երբոր հանդարտ օդով, հանդարտ ծովու վրայ հանդարտ խելքերով ծաղկահասակ երիտասարդներ հասակածաղիկ օրիորդներու հետ պըտոյտ մը կազմակերպեն նաւակով , և նաւակին մէջ պզտիկ և անվնաս կատակներէ թելադրեալ նաւակն շրջի , և երիտասարդներն ու օրիորդներն անդունդն խորասուզին , կը կատարուի շրջատեղութիւն կամ շրջավայրութիւն ։ Ջուկերը կուրախանան այս բանին վրայ , բայց խորասուզելոց բարեկամք կը տխրին մինչեւ աստիճան մը և մինչեւ ժամանակ մը ։ Սակայն իրաւունքը երկուստեք է . նոքա կը գտնեն , սոքա կը կորսնցնեն , նոքա կը յագենան , սոքա կը քաղցնուն . նոքա կը մարսեն , սոքա կը մոռնան , և բնութեան օրէնք անխոտոր , անվրէպ , անսայթաք , ուղղակի , չփչիտակ ,—որպէս կ՚ըսէ լուսահոգին ,— կը յառաջադիմեն յոր կարգեցանն (ըստ Եզնկայ) ։

(Շարունակելի)

---

## ԳԱՐԱՄԱՆԼԸ ՊԻՐ ՊԱԳԳԱԼԸՆ ՆԱՍԻՀԱԹԼԱՐԸ

—

(Շար եւ վերջ)

Պախալլըգտա էլ չարուգլուղու վէ պիլէք գըրկընլըղը կայէթ էյզէմիյէթտէն տիր , զիրա պագը թամահքեար միւշթէրիլէր կէլիպ թարթըսըզ օն բարալըգ գաշէր բէյնիրի ալըրլար վէ ազ կէօրիւլտիւյիւնտէ «թարթսանա չու բէյնիրի պագալըմ» տէրլէր , իշթէ օլ վագըթ բէյնիրի թէրազիյէ գօյտուղունտա , օն պէշ բարալըգ կիպի կէօսթէրիպ , պիզտէ էքսիք վէրիլմէզ պաշգա թիւքեանլար կիպի տէյէրէք , միւշթէրիյի ուլթանտըրմալըսըն ։ Ամմա տէյէճէքսին քի, պագի թէրազի թուլթմախ պիլէն միւշթէրիլէր թէրազիյի ալըպ քէնտիլէրի թարթմագ իսթէրլէր . ղարար եօխ , թէրազիմիզ տախի պիլէկլէրիմիզ կիպի քէնտի պիլտիյինի օխուր ։

Սօղանը թարթըպ թօրպաեա եախօտ ղէմպիլէ տօլտուրտըղըն վագըթ սաղ էլինին պաշ բարմաղընը թէրազինին կօզինին քէնարընտան այըրմամալըսըն քի , օ պաշ բարմաղընլա պիր իքի պաշ սօղան եէրէ տիւշիւրէսին , պու հարաքէթինին միւշտէրի թարաֆընտան ֆարգ օլունմամասընա թէէմին օլ , կիւնտէ տիւքեանէ կէլէն օն ատէտ սօղան միւշտէրիլէրինտէն իքիշէր թանէ աբարտըրսան , թամ իւչ եիւզ տիրհէմ սօղան գազանըրըզ , քի պու կիւնքի հիսապըյլա օթուզ բարա տէմէք տիր ։

Նասըլ քի մալիւմին տիր , թէրազինին կէօզլէրի կայէթ թէմիզ սագլամալըյըզ , անճագ մալ գօյտըղըմըզ կէօզինիւն ալթընը հիչ թէմիզլէմէք իսթէմէտիքտէն պաշկա , [illegible] պագը պաղը ըսլատըպ գապաճա թէպէշիր թօզու իլէ թէմիզլէմէլի իւչ տէօրթ տիր հէմ եափըշըա քեար տըր ։

Կազ լիպրասընը եիւքսէքտէն տօլտուրմալըսըն քի քէօբիւրսին վէ աղըզընտա իքի բարմագ քէօբիւք գալսըն , պատէհու էլ չափուգլըղըյլա լիպրայը աճէլէ պօշալթմալը քի , քէօփիւկ սէօնիւպ , իքի բարմագ լիպրատա էքսիք օլտուղու կէօրիւնմէսին ։

Եօլտա կէօրտիղին պօշ քիպրիթ գութուլարընը թօբլայըպ տիւքեանտա կէթիրմէլի վէ իքի գութու քիպրիթի իւչէ թագսիմ էտիպ , սաթմալըսըն օղուլ ։

Իքի վէ եա իւչ կիւնտէ պիր ճանըն սըգըլտըղընտա պիր ավուճ ուֆագը թօբրագ տօգսան փարալըգ սաթտըղըմըզ ֆասուլեանըն գաղէվիսինէ աթապիլիրսին ։

Պիզիմ պագալ, վէրտիղի նասիհաթլարըն թէճրիւպէսինի օլունտա կէօսթէրիպ , վէ իքի իւչ տէֆա նարկիլէսինի գուվվէթլիճէ չէքտիքտէն

սօղլա, «Էյ կօզումին սէվինճէք եաղը օղլում, չիմտիքի վագըթտա պագալլար զարուրի կէչինմէքտէ տիրլէր, գէրա պու պէնիմ սանդա վէրտիզիմ նասիհաթլարըմտան պէխապէր տիրլէր, էկէր խապէրլէրի պիլէ օլսա իճրա իտէմէզլէր չիմտիքի տէօրթ կէօզլիւ միւշտէրիլէրին էօնիւնտէ. վէ ագալլի օն իքի այ պիր տիւքեանտա տուրուպ զիմէմ տէֆթէրիյլէ եիւքլիւ տիւքեանտան տըշարը չըգարըլար, անճագ պէն չէյիրտէքտէն եէթմէ եանի օն իքի սէնէլէրտէն պէրու պու տիւքեանտա պէօյիւմիւշ օյտուղումտան, պա խուսուս միւշտէրիլէրիմ սայըլը վէ թօգ կէօզլիւ օյտուխյարընտան պէնի պէսլէեօրլար, սէնտէ ա՛ կօզումուն ըշըղը, ճաշտ ու իգտամ իտուպ նասիհաթլարըմա տիգգաթ իյլէ գօլթուղումուն ալթընտա իչինէ տէվամ իտէր իսէն, Ալլահ խայըրընտա ինշալլահ պիր պաստըրմաճը թիւքեանը ալըվէրիրիզ. հայտէ օղլում, Ալլահ ութանտըրմասըն, ագ եիւզլի չըգըրա ութանմայասըն» տէյուպ խաթըմի քէլամ իյլէտի։

Իրթէսի կիւն օղլու, տէօրթ սէնէլիք պագգալ գալֆասը կիպի տէգկեահ պաշընտա տուրուպ, սուլուն ու չէքմիշ սալամուրա բէյնիր ֆըչըսընը սու իլէ տօլտուրմագլա մէշղուլ իտի։

## ԱՍԿԷ ԱՆԿԷ

Ղայէթ չիշման մատամըն պիրի Քէօբրիւ պաշընտա տուրան արապաճըլարտան պիրինէ տէտի.

—Առապաճը Գառակէօմրիւկէ գաչ ղրուշա կէօթիւրիւրսին,

—Պիր մէճիտիյէ վէր սիֆթահ ուղրունա կէօթիւրէյիմ.

—Նէ պո՛ւ, հայտէ օն ղուրուշ վէրէյիմ տէ կէօթիւր պագ եալընըզ պիր քիշիյիմ.

—Էկէր առապայը պէն կէօթիւրէճէք օլսամ ինանըզ կէօթիւրէյիմ ամա, հայվանլարըմ պիր թիւրլիւ գանմաեօրլար պիր քիշի օլտուղընըզա։

***

—Տուտու վագը չիտակ Ցէրպապային կընայ տէ զուրցէ քի, նշանս եա ընէ։

—Խենթեցար օրթտի, սէպէպը ի՞նչ է։

—Պէն զաթը իչկի գուլլանըր էրքէքլէրտէն հօշլանմամ, ճիւնին զարը՞ մը ալաճաղըմ։

—Ծօ եավրում, տիւշմանի խօսք է.

—Նա՞սըլ տիւշման, ասօր էս աչկովըս քէօբրիւյին վրայ տեսայ քի. քեօռ կինով, չարխան կռնակն էր գացեր. խապար չունի։

—Աշկըդ խաղայ տղայ, հիմըկու մօտան անանկ է։

—Սահի՞հ սէօյլէեօրսուն, պէ։

—Հապա՛, քալելու համար պիլէ մօտա կայ. հիմա չը՞ նայի՞ս, կինամկորի պէս կը քալեն կոր։

—Էյ անանկ է նէ հասկցուեցաւ. աս աղճիկը աս մօտաները սորվեր է նէ, ինծի քիւլ փէրիշան կընէ. կենէ տուն իմ բասծիս պէս, կընա նշանը եա ըրէ.

***

Թէալթրօ չէնասըհտա պիր ագգէօռ.

—Ա՛հ, պու նէ՛ միւտհիշ կիճէ, պու նէ՛ հալ, տիթրէեօրում, հէր քէս րահաթ ուեումագտա, պէն իսէ, հօթէ պէրի կէզմէքտէեիմ. . հէյվա՛հ, նէ՞ եափաըմ, նէ՞րէեէ գաչաըմ, եաղմուր տախի չիտտէթլէ եաղմագտա տըր։

Թէալթրօեը եէնի կէօրմիւշ օլան սէյիրճիլէրտէն պիրի.

—Կէօրտիւնմի՞ւ օլանը. պէրապէր չէմշիյէ տէ ալմադըմ. չիմտի նէ հալթ իթմէլի պիլմէմ։

***

Ռնգախօս մը, որ ամենուն ծաղու առարկայն դարձած էր, գրագիտութեան վրայ ճառելով, կըսէ.

—Քանի մը պինդ գլուխ գռագէտներ կան, ոռոնք ծիծաղաշարժ պառքեռութիւններ կը գռեն. ըստ իմ կառծեաց պէտք է բառ մը ինչպէս կը հնչուի, նոյնպէս գռել։

Խօսակիցներէն մէկը դառնալով կ'ըսէ,

—Եթէ բառը քիթէն հնչուի՞ . . .

***

Խմբագրատան մէջ.

—Ան չէ ամա, այս հին օրացոյցները ի՞նչ կընէք. կը պահէ՞ք։

—Պահենք նէ ի՞նչ կըլլայ։

—Նասըլ ի՞նչ կըլլայ. երեսուն և վեց տարի յետոյ նորէն կը գործածուի.

—Ինչ կըսես եղբա՛յր, մեր ազգին մէջ բան մը երեսուն և վեց ժամ չկրնար պահուիլ. ո՞ւր մնաց երեսուն և վեց տարի։

***

Իքի չիֆ միւսիւլէր եօլտա կիտէր իքէն, պիր զաթա թէսատիւֆ իտէրէք, պունլարտան պիրիսի մէրգումա՝ ղաեէթ թէվազուքեարանէ պիր սէլամ վէրիր։

—Օ տէյիլ ամա պիրատէր. քի՞մ իտի օ ատամ քի եէրտէն թէմէննահ ըլա սէլամլատըն,

—Պիլմէ՞սին, նամը պիր թէրզի տիր.

—Է՛. բէք էյի ամա, պու գատար թէվազու իթմէնին ալէմի նէ։

—Նէ՛ սէօյլէեօրսուն. կէչէն եըլ պաշընա եագըն պիր գաթ էսվապ եափտըրտըք. տահա հէրիֆէ պէշ բարա վէրմէմիշիզ տիր։

---

Տօքթօր Զարդարեան էֆէնտի՝ պու քէրրէ Պէյօղլունտա Աղա ճամիսինտէ իմամ սօգաղընտա 24 նօմէրօլը խանէյէ նագլ իթմիշ տիր։

---


## ՆՈՒԷՐ ԿԱՂԱՆԴԻ

## ՀՆՉԱԿ

Հաւաքածոյ Զուարճաբանութեանց

Ա. Բ. Գ. Դ. Ե. հատոր կազմեալ

Գին 30 Դահեկան

—

Սոյն հինգ հատորները, որ ասկէ առաջ 60 դահեկանի կը վաճառուէր, այս անգամ 20 ձեռք միայն մնացած ըլլալով՝ կաղանդի առթիւ որոշուեցաւ կէս գնով, այն է 30 դահեկանի վաճառել։

Կը գտնուի Մէրճանը Վ. Մարգարեան գրատունը և Պահճէ գաբու Ջըրավաճառ Պօղոս և Յակոբ աղայից խանութները։

## ԱՎՐՕՊԱՆԸՆ ՀԷՐ ՆԷՎ ԵՈՒՆԼՈՒ ԳՈՒՄԱՇԼԱՐԸ

—

## ՄԱՐՏԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ

**151 ՍԹԱՄՊՕԼ ԳԱԼՊԱԳՃԸԼԱՐ ՊԱՇԸ 151**

Մէզքիւր տիւքքեանտա Եվրօբանըն սօն մօտալարընտան հէր նէվ սիեահ վէ եունլու գումաշլար, լահօրաքի, թ պէզ, քաշմէրախքօզ, վիկօն, օթօման, սէրփանթին, արնիկէր, չանագ. Թըրիքօ հէր ճինս ալա ԴԸՀԼԸԳ Փանէլալար, շալ րէնկի գաստօրլար, իփէքլի շալ Փանէլալար, սօն մօտա Ֆիստանլըգլար, կարնիլի վէ կարնիսիզ տիւլ գումաշլար, կարնիլիք գատիֆէլէր, ճար վէ պօհճա շալլար վէ սաիրէ կէրէք թօփ վէ կէրէք արշըն իլէ սաթըլմագտա օլուբ, Թէշրիֆէ րագպէթ պուեուրան զէվաթը քիրամ հէմ էսմաեանըն նէֆասէթ ու զարաֆէթինտէն վէ հէմտէ ֆիատլարըն էհվէնիյէթինտէն Ֆէվքելատէ մէմնուն օլաճագլարը իյան օլունուր:

— —

Սալըգ Մամուլըն սահիպ իմթիեազը Այվազեան էֆէնտի, Գալաթատա, Բէնքչէնպիհ–Պազարընտա, Իբսի խանընտա պիր մաղազա քիւշատիյլէ նէֆիս զէյթին եաղը, վէ լէզիզ շարապ վէ մասթիգա վէ էն ալէա ճինսինտէն տէ սապուն վէ քէզալիք էնվայի նէֆիս գօնեաքլար վէ համթթա ժօրժ Սալամօն գօնեաղը տախի կէթիրթմէքտէ պուլունտուղունտան մէմնուն օլաճագլըղը արզու իտէն զաթլարըն թէշրիֆլէրի իխթար վէ տավէթ օլունուր:

Պօղչա աստաըննըն պիր սէնէլիքտէն էսկիմի սէնէլիկէ գատար էսկի շարապլարիլէ: Դըզըրըլըն տախի գումանտարիա թէամիյէ օլունան շարապլար պուլունտուղունտան, լիւզումու պուլունան զաթլարըն մախմլէրի օլմագ իճըրէ, իյան օլունուր:

—

## ՔՕՔ ՔԷՕՄԻՒՐԻ ՏԷՓՕՍՈՒ

—

Մէզքիւր տէփօսուն սահիպի, Յովէլ Կ. Կարինեան, պու տէֆա խարէճի վէ օճագ իչուն ղաեէթ տաեանըգլը քօք քէօմիւրիւ կէթիրթմիշ օլուպ, Ֆընտըգլըտա, Քէրէսթէճի սօգաղընտա, 14 նումէրօլու տիւքքեանտա, ղաեէթ էհվէն ֆիաթլա ֆիրուխթ իթմէքտէ օլտուղընը, վէ տըզու իտէնլէր իչուն ալեա ճինստէն մանկալ քէօմիւրիւ տախի պուլունտուղընը բաղըշթլու էհալիեէ խաս սէթէն իյան ու պէյան իտէր:

—

## ՃԱՆՖԷՍՃԻ ԱԻԵՏԻՍ ՊԷՅԼԷՐԵԱՆ

**ՕԹԱՆՊՕԼՏԱ ՉԱՐՇՈՒԻ ՔԷՊԻՐՏԷ ՍԱՆՏԱԼ ՊԷՏԷՍԹԷՆ ՄՕԳԱՂԸ ՆՕ. 7**

Իչպու մաղազատա սիեահ վէ րէնկլի ֆիթթանլըգ, ճէհէզ իչին իբէքլի գումաշլարըն էՆ էյի վէ կիւզէլ ճինսլէրի, կրօն Փայլ Ֆրանսէ, արմիւր մէրվէյեօզ, սաթէն, լիօն, րէնկլի աթլազ, մանթօլուգ չիչէքլի գատիֆէ, կարնիլիք չըպուգլու գատիֆէ, գարէլի ֆիթթանլըգ, վէ իբէքլի կըրնատին գատիֆէլի պուլունտուղունտան, միւրաճաաթ իտէճէք քեաֆֆէյի րաղպէթլու միւշթէրիլէրին կէրէք էսմաանըն նէֆասէթ վէ զարաֆէթի, վէ կէրէք ֆիաթլարըն էհվէնիեէթինճէ խօշնուտ օլաճագլարը պէեան օլունուր:

—

## ՔԻՒՉԻՔԵԱՆ ՊԻՐԱՏԵՐԼԵՐ

### ՏԷՊՊՕ

### ՍԹԱՆՊՕԼ ԵԷՆԻ ՃԱՄԻՏԷ

## ՍՐԷՃԱՐ ՏԻՒՔՔԵԱՆԼԱՐԸ

ՍԹԱՄՊՕԼ Քէօբրիւ գարշըսընտա — 77

ՊԷՅՕՂԼՈՒՆՏԱ Տօղրու եօլտա — 168

Մէզքիւր էճզախանէ վէ սբէչար տիւքքեանլարընտա միւթէատտիտ վէ էնվայի թէրքիպաթը քիմեէվիյէ վէ էճզա վէ մուալէճաթ վէ ալէաթը ճէրրահիյէ, վէ ալէա ճինս լասթիք իլէ չէլիքտէն մամուլ ալաթ ու էտէվաթ, վէ Լիսթէր ուսուլինտէ պաղլար, վէ Ֆրանսըզ վէ Ինկիլիզ էճզալարը, սօֆաթօնուն էն ալէա ճինսի, եէրլի վէ էճնէպի մատէն սուլարը, ֆօթօղըաֆճըլար իչիւն Թէրքիպաթը քիմեէվիյէ, Պօրտօ շարապլարը, գօնեաքլար, էնվաի իչկիլէր, գօգուլու սապունլար, նէֆիս բուտրա, օ տը Գօլօնեը, սաչ սուլարը, տիւզկիւնլիւքլէր, վէ ըսբէչարլար իլէ քիմեախանէլէրէ մախսուս ճամ գապլար վէ ալաթ ու էտէվաթ մէվճուտ օլուպ, Թօպտան վէ բէրաքէնտէ Ֆիրուխթ օլունուր:

Քէզալիք մէզքիւր տիւքքեանլարտա մուայէնէի Թըպպիյէ տախի իճրա օլունուբ, պունա մախսուս օտալար վար տըր. կէճէլէր աչըգ տըր.

Զէյլ.—Պիլճիւմլէ էճզա վէ էսթաամըղըն էն ալ'ա ճինստէն օլտուղունու վէ բէք էհվէն ֆիյաթլա սաթըլտըղընը Տօգթօր էֆէնտիլէրէ վէ րաղպէթլու էհալիյէ իյան ու պէյան իտէրիզ:

—

## ԼԱՍՏԻԿ. ԿԱԼՕՇ ՏԷՓՕՍՈՒ

—

**ՍԹԱՄՊՕԼ, ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ ՉԷՇՄԷ ԻԹԹԻՍԱԼԻՆՏԷ**

**Նօ. 47 ՎԷ 49.**

Մէզքիւր լաստիկ, կալօշ տէփօսունուն սահիպի. Սեպուհ Տէմիրճեան, Րաղպէթլու միւշթէրիլէրինէ մէմնուն իթմէք իչուն, հէր նէվ Ինկիլիզ, Ռուս վէ Համպուրկ մալլարընտան մաատա, ախիրէն Ամէրիգատան ղաեէթ պիչիմլի վէ կուսթօլու հէր նէվ լաստիկ վէ կալօշլար կէթիրթմիշ օլուպ, ղաեէթ էհվէն ֆիեաթլա ֆիրուխթ իթմէքտէ տիր:

Իչպու Ամէրիգա կալօշլարը սայիր մահալլէրտէ սաթըլանլարըն տէօրթ միսլի տաեանըգլը օլտուղու վէ մարգասը «Կիւնէշ» վէ ուճլարը մաակալէթլի օլաճաղընտան Թագլիտլէրինէ տիգգաթ օլունմասը խասսէթէն իխթար օլունուր:

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Կ. ՊԻՊԷՐԵԱՆ
Պոլիս Ջիչէք-պազարթիւ 23